



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Գ. — ԵՐԶԱՆ ԻԱ.

1889

ՏԱՐԻ ԻՐ. ՄԱՐՏ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ԲԱՐԿՈՑ ԼՆՁՈՒՆ

(Դ. 46—50):

Թո՛ղ իմ անձը փառաւորէ Տիրոջն ու ցնծայ իմ հոգիս Փրկիչ
Աստուծովս: Ինչու որ մի՛ թաներ արաւ ինձ Հգօրն՝ ու սուրբ
է Նորա անունն—ու Նորա ոգորմութիւնն ազգից ազգ (անպա-
կաս կլինի) իրանից վախեցողներէր:

Թէեւ ամէն մահկանացու մարդոց պարգեւած է այն հրաշալի բարիքն, այսինքն է՝ այն յատուկ ընդունակութիւնն, որով կարողանում են հոգեւորը՝ մտաւորը մարմնացնելու, որ այդ միտքն իրանց նման էակներին հաղորդեն, բայց այս պարգեւը վայելող միլիոնաւոր մարդոց մէջ անտարակոյս քիչերն են միայն, որ երբ և իցէ՝ մտածած լինին այդ մեծ բարիքի վրայ թէ՛ օրչափ թանկագին է իրանց համար, Մարդկային լեզուն, բանաւոր արարածների այս առանձին սեպհականութիւնը—մեր մէջը բնակող անմահ հոգւոյ այս անդրանիկ արուեստն, այս երեխայրիքը, նորա ճարտարութեան—այս ողջոյնն, որ հոգիները հոգիներին տալիս են, որով փոխադարձաբար յայտնում են միմեանց իրանց մարդկային բնութեան հաւասար լինելն և ինչ բանի որոշուած ու սահմանուած լինելն՝ անշուշտ արժանի է քրիստոնէի լաւ մտածողութեանն, որպէս և ամեն բան, ինչ որ Աստուծոյ մեղ վերայ ունեցած սիրոյ և բարերարութեան աներկուանալի վկայութիւնն է:

Շատ հին ժամանակներում, երբոր մարդիկ բնութեան՝ կամ աշխարհի մէջ Աստուծոյ յայտնութիւններին, կամ յայտնուելուն աւելի մօտիկ էին, քան թէ մեր օրերում, և երբոր ազգաց պատմութիւնն ու նրանց ունեցած այլ և այլ վիճակներն՝ աստուածային արդարութեան անմիջական ներգործութիւններ էին ճանաչում—այն ժամանակներումն իմաստունները շատ էին մտածում աշխարհիս մէջ խօսուած լեզուների իրարից շատ ու շատ տարբեր լինելուն վերայ: Եւ իբրեւ աւանդութիւն՝ ուշադրութեան արժանի մի պատմութիւն է մնացել, որ գրուած է ապագայ սերնդոց համար Մովսէսի առաջին գրքում:

Այս գրքի մէջ ասում է թէ՛ ջրհեղեղի օրերից յետոյ մի բարբառ կար՝ և բոլոր աշխարհիս մարդիկը դեռ ևս մի լեզու էին խօսում: Նոյ նահապետի տերունդը գնաց Սեմաարի դաշտն, եւ որովհետեւ շատ շատացան՝ և իրանց հօտերն արածեցնելու համար աւելի շատ և ընդարձակ տեղի պէտք ունէին, շատ անգամ ամբողջ ընտանիքներ պէտք էր հօտերի հետ հեռու տեղեր երթային, որ բաւական արօտ կարողանային

գտնել իրանց ոչխարների համար: Շատ անգամ պատահում էր այդ միջոցին, որ հեռու տեղեր գնացողներն իրանց ազգականների համար կորած էին համարվում, իրանք էլ իրանց ազգակիցներին կորցնում էին, սւ իրանց հայրենի երկիրն էլ չէին գտնում: Սորա համար մոռներումը դրին բոլոր աշխարհիս երեսն իրանց ցրուելուց առաջ՝ մի աշտարակ շինել, որոյ դուռնն երկինք հասնի. այդ աշտարակն իրանց համար թէ՛ անուն սւ յիշատակ մնայ, և թէ՛ ինչպէս մեկնում են մեր՝ բոլոր աշխարհիս երեսը ցրուելուց առաջ, խօսքը, մի նշան լինի, որով իրենց ցրուած հեռաւոր տեղերից իրանց հայրենիքը ճանաչեն:—Բայց նորանց այս միտքն ընդգէմ էր Աստուծոյ խորհրդին: Որոյ կամքն էր, որ աշխարհիս ամեն կողմերումն, ամեն երկիրներումն էլ մարգիկ բնակուած լինին: Սորա համար ասուած է սուրբ գրքումը թէ՛ խառնեց Աստուած նորանց լեզուն, որ ոչ մէկը միտի լեզուն չհասկանայ: Այսպէս ցրուեց նորանց Տէրն այնտեղից երկրիս ամեն կողմերը, (Ծննդ. ԺԱ. 1—9):

Մի անօգուտ աշխատութիւն արած կլինի մարդ, եթէ որ ուղենայ քննել և իմանալ թէ՛ որք կարող էր լինել մարդոց ամենահին՝ ամենառաջին լեզուն: Ինչ որ մեզ սովորեցնում է սուրբ գիրքը՝ թէ սկզբում բոլոր աշխարհումս մի բարբառ՝ մի լեզու կար, նոյնը հաստատում է ոչ միայն մեր մտածողութիւնն, այլ և բոլոր լեզուների տարերքն ու յատկութիւնն և իրար հետ ունեցած առանձին ազգակցութիւնը: Կարծիք չկայ, որ ինչպէս ամենահին ազգերի կեանքը մանկական՝ բնական պարզութեան մէջ էր, իրանց լեզուն էլ շատ աղքատ և անարժեքստ պիտի լինէր: Այդ լեզուի նախնական մասերը պիտի լինէին ցաւ և ուրախութիւն զգալու ձայների, իրանց ձայները կենդանիների ձայներին նմանեցնելը, կամ տարերքի մեղմ ու սաստիկ ձայներն՝ և ամեն օր գործածուած բաների՝ կամ առարկաների ձայնն, որ դիտում էին ու պարզ նշանակութիւն տալիս: Երբսր մարգիկ փորձառութիւնների աւելի հարուստ պաշար ունեցան և փորձառութիւններով աւելի մեծ զարգացման հասան՝ թէ իրանց խելքի և թէ իրանց զգացմանց կողմից,

բառերի հտրստութիւնն էլ և յաջողակ կերպով իրանց միտքն ու զգացմունքն արտայայտելն էլ աւելացաւ:

Սուրբ գրքի մէջ լեզուների խառնուելու մասին գրուածը մեծ խորհաւորդ ունի իբրեւ անհերքելի պատճառ հին ազգերի իրարից բաժանուելու կողմանէ, ինչպէս որ այսօրուան օրս էլ տեսնվում են մարդոց մէջ բաժանմունքների, երբ որ իրար լաւ հասկանալ չեն կարողանում: Լեզուի մէջ է տպուած տեսնվում մարդու ամենաներքին որոշ յատկութիւնն, և որովհետեւ մարդոց մէջ բնաւորութիւնների տարբերութիւնը շատ մեծ է և մտածելու որպէս և գիտելու կերպը շատ զանազան, այս պատճառով էլ ամեն մի մարդ մտածում է և խօսում իւր կերպով, երբ որ մեղաւորին կիրքն էլ մէջ է մտնում ու գալիս խառնվում մի պախարակելի մտածմունքի ու զգացմունքի հետ, այն ժամանակ լեզուն հեշտութեամբ սուր է դառնում, որ եղբայրներին եղբայրներից բաժանում է: Լեզուն մի փոքր անգամ է, բայց մեծ բաներ է անում: Տես, մի փոքր կրակ ինչպիսի մի անտառ է կրակ գցում. (Յակ. Գ. 5.):

Լեզուների զանազան լինելուն շատ պիտի նպաստէր անշուշտ՝ մարդոց այլ և այլ տեղեր բնակուած լինելը, կլիման, պարապմունքն ու մտենդն: Այս ամեն հանգամանքները զօրաւոր կերպով ներգործեցին ու մեծ ազդեցութիւն ունեցան ազգերի ներքին և արտաքին կեանքի վերայ՝ և մասնաւորապէս իրանց խօսած լեզուի տարբեր լինելուն վրայ: Ինչպէս որ՝ կան մարդկային ցեղեր, որ իրանց մարմնի կազմուածքով, կաշու գունով ու տարբեր բնաւորութիւնով սաստիկ զանազանվում են իրարից, այնպէս էլ կան լեզուի մէջ տարբերութիւններ՝ իբրեւ միեւնոյն լեզուի տարբեր ճիւղեր՝ կամ բարբառների, որոնք թէ՛ և նոյն արմատից կարող են առաջացած լինել, բայց իրանց արտայայտութեան կերպերի մէջ բոլորովին որոշ են և իսկապէս տարբեր իրարից: Այս, մինչև անգամ միեւնոյն երկրի ու ազգի մէջ շատ անգամ տեսնվում է բարբառների մեծ տարբերութիւն: Գերմանիոյ ծովի ափերի և Ալպեան սարերի վրայ եղած Սենա գետի ձկնորսներն, որպէս և գիւղացիքն ու քաղաքացիքը շատ անգամ դժուարութեամբ են միմեանց լեզուն

հասկանում, թէ՛ և նոյն լեզուի գերդաստանի բարբառներն են իրանց խօսած լեզուն:

Պատմութիւնն՝ ազգերի այս մեծ դաստիարակը՝ պակաս զօրաւոր ազդեցութիւն ունեցած չէ լեզուների զանազան լինելուն վրայ: Հին Ժամանակներից սկսած շարունակաբար եղած պատերազմները, մեծ մեծ ազգերի իրանց բնակութեան տեղից ահագին բազմութիւններով գաղթելն, որ ուրիշ ազգերին նուաճելուց յետոյ, իրանց սեպհականեն նրանց պտղաբեր երկիրները՝ պատճառ եղան ազգաց այլ և այլ ցեղերի միմեանց հետ խառնուելուն: Այս միջոցին կորան հին լեզուներն, որ հազարաւոր տարիներից սկսած ծաղկած վիճակի մէջ էին՝ ու նոր լեզուներ կազմուեցան հին լեզուների աւերակների խառնուրդից: Բայց յետոյ, երբոր այլ և այլ ազգեր իրանց բնակուած տեղերում աւելի հաստատուեցան, մի նոր զարգացումն ընկաւ: Ինչու որ այժմ մի ազգ ընդունեց միւս ազգի գիւտերն, իրար հետ ունեցած փոխադարձ հաղորդակցութեան ու յարակցութեան մէջ՝ հաղորդեցին միմեանց իրանց գաղափարները, կարգադրութիւններն՝ ու երկրի բերքեր փոխեցին իրար հետ, և սորա հետ միասին իրանց նոր սովորածներն էլ նոր նշանակութիւն ունեցող բառերով իրանց լեզուի մէջ մտցրին: Որչափ որ մեր օրերումը միեւնոյն ազգի մէջ խօսուած լեզուն տարբեր է այն լեզուից, որով խօսում էին մարդիկ հազարաւոր տարիներով առաջ, այնչափ էլ տարբերութիւն պիտի ունենայ այն լեզուից, որ էլի հազարաւոր տարիներ անց կենալուց յետոյ պիտի խօսեն:

Լեզուն այն մեծ պարզեւներից մէկն է, որ յաւիտենական աթոռի վրայ բազմող Սէրը տուել է մահկանացու մարդոց ազգին: Լեզուն մարդոց համար միմեանց հասկանալու կարեւոր միջոց չէ միայն, միայն հոգեւոր կամ մտաւոր կապ չէ, որ կապում է ազգեր ազգերի հետ ու դարեր դարերի հետ, այլ և սուրբ նուիրական գործիքն է՝ մարդկային ազգիս լուսաւորուելուն, ազնուանալուն ու երջանկանալուն համար: Ի՛նչպէս մեղկանալու է խուլ ու համրն, որոյ ականջին մարդկային ձայնի հնչումն երբէք չէ մոտում: Նոքա մտաւոր զարգացումն երբէք

այն բարձրութեանը չի հասնիլ, որով ուրախանալ կարող է անթերի զգացմունք ունեցողն, ինչու որ նորան պակասում են գալափարների պարզութիւնն, որ կենդանի ձայնը միայն կարող է ծնել ու արտադրել: Այսպէս էլ բարբարոսութեան մէջ թաղուած ազգը խուլի է նման: Թէև, իրաւ է, ականջներ ունի լսելու, բայց նորա ըմբռնման ու հասկացողութեան զգացումն աւելի բարձր բաների համար դեռ ևս փակուած է: Բիթացած մոլորով անց է կացնում իւր կեանքը, ծառայելով միայն իւր ցանկութիւններին, կամ ինքն ճնշուած, բիթացած ոտրկութեան մէջ՝ բռնակալ գլխաւորների լծոյ տակ, կամ ցանկանալով, որ ուրիշ ցեղերի վրայ դնի իւր անգութ և արիւնածարաւ բռնակալութեան լուծն, ոչ մի գեղեցիկ՝ կամ հրապուրիչ բան չգտնելով ընտանեկան կենաց մէջ, ինչու որ կին ասածդ դեռ ևս սաստիկ անարգ վիճակի մէջ է իբրև մի ամենաստոր արարած. թէև կրօն ու կրօնի պաշտօնեաներ՝ քուրմեր ունի, բայց ի՞նչ կրօն է, որ ունի. նորա կրօնն երկիւղն է, որ քաշում է չար ոգիներից ու կախարդութիւնից, որոնց չարութիւնն իրանից հեռացնելու յուսով՝ արիւնոտ զոհեր են անում իբա պէսներն: Այս ստոր աստիճանի մէջ են՝ օրինակ՝ Ափրիկայում բնակուող սեւամորթների շատ ցեղեր, և նոյն աստիճանի մէջ էին մեր իսկ նախկին այն հին ժամանակներումն, երբոր իրանց բնակութեան խրճիթները դեռ ցիցերի վրայ էին շինում ծովակների ու ճահիճների մէջ, Այն ժամանակուանից յետոյ որքան մեծ փոփոխութիւններ են եղել, որ մենք բարբարոսական դարի տեղ՝ բարձր լուսաւորութեան դարին ենք հանդիպում այժմ: Եւ ի՞նչն է, որ նրանց հազարաւոր դարերի ընթացքում այսպիսի զօրաւոր կերպով խթան ու թռիչ է տուել, բարձրացրել ու առաջ տարել: Գլխաւորապէս լեզուն, ուսման կրթութեան խօսքն:

Աւելի խելացի մարդոց իրանց ազգի մէջ տուած ուսումնովը, մի ազգի ուրիշ ազգերի հետ ունեցած. յարաբերութիւնովն, որով իրանց ունեցած փորձառութիւնները փոխադարձաբար հաղորդում էին միմեանց, քրիստոնէութեան պատգամաւորներով — Աւաքեալներին եմ ասում — որ աստուածային գիտու-

թեան լոյսը բերին մարդոց եւ տարածեցին, դպրոցներ հաստատելովն ու գիտութիւնների վերականգնելովն այս՝ այն ազգն իւր ընկած դրութեան ցեխից դուրս եկաւ ու կամաց կամաց բարձրացաւ: Լեզուի՝ խօսքն էր, որ նոր կեանք ստեղծեց:

Այսօր էլ տեսնում ենք, որ հոգւով կենդանութիւն ու կեանք ունեցող մարդուս շրթանց շնչի մէջ ինչ զօրութիւն կայ: Մեկեր երեխան լսում է իւր մօր սիրալիր ու փաղաքշող ձայնին. մանուկն ընդունում է իւր ծնողաց բերանից առաջին յորդորներն ու խրատներն, որ բարւոյն հետեւի, իսկ չարից հեռու մնայ, դպրոցի մէջ բացվում է նրա առաջ տմենայն օգտակար և ազնիւ բանի ուսման աղբիւր — ու յետոյ կեանքի մեծ վարժատան մէջ ամեն տեղ հնչում է նորո՛ւ ականջին մօրդկային խօսքն՝ նորան կրթելով, նորա միտքը բանալով, նորան առաջ տանելով, նորան խեղճացնելով, մխիթարելով, վախեցնելով ու բաղդաւորցնելով: Առանց լեզուի անկարելի կլինէր այնպիսի կրթութիւն, ուսում տալը մարդուս, որ նա Աստուծոյ պատկերը ու նմանութիւնը լինի: Մարդկային ուրիշ ամեն գերազանցութիւններ ունենալու հետ եթէ որ սրուշ և այլ և այլ նշանակութիւն ունեցող ձայն չունենայինք, այլ կենդանւոյ բնութեան ձայնը միայն, բնազդմամբ ուրախութիւն ու ցաւ յայտնող նորա ձայնը միայն ունենայինք, մեր խելքը կալուկալ եղած կմնար, մեր հօգին էլ մեր մարմնի մէջ կենդանի թաղուած:

Լեզուն Աստուածանից մարդկային ազգին տուած ամենամեծ պարգևներից մէկն է: Ինչպէս որ մարդուս գործակատարութեան համար՝ իւր մարմնին՝ ձեռքն ու աչքն են հարկաւոր, այնպէս էլ հոգուն ու մտքին՝ լեզուն: Եւ ինչպէս որ մարդուս հոգին ու միտքն ընդունակ են ու յարմարաւոր միշտ և անչափ հարստանալու և զարգանալու, այնպէս էլ նորա ազնիւ գործիքը՝ լեզուն: Երբոր մենք շատ ուսեալ ճարտասանի խօսածներն ենք լսում, կամ կարդում ենք մի հեղինակի ամենալաւ շարադրութիւնը, զարմանում ենք՝ մէկի ասածների և միւսի՝ գրածների մէջ մեզ յայտնած հարուստ գաղափարների վրայ, միևնոյն ժամանակ զարմանում ենք նրանց մեծ հմտութեան վրայ,

որով գիտեն վարպետ կերպով բացատրել իրանց մտքերն: Այդ տեղ տեսնում ես, որ խօսքն ու միտքը միացել են. հոգւոյ խորքից յառաջացած շարժմունքը կայծակի նման է երևում. մի մարդու հոգին սաստիկ ներգործող, յաղթահարող, գլխից մինչև ոտ շարժող, ոգևորող զօրութիւն ունի ուրիշ հազարաւոր հոգիների վրայ: Այս լինչ զօրութիւն ու ներգործութիւն է, որ ունի մարդուս հոգին: Լեզուն գերազանց է մինչև անգամ ամեն մի ուրիշ երկրաւոր ուժից՝ իւր ունեցած ազդեցութեան մեծութիւնովն՝ և խոր ու անջնջելի տպաւորութիւննովն, որ թողնում է մեզ վրայ: Մի թագաւոր, մի իշխան իւր կառավարչական գործերովը կարող է օգնութիւն կամ անեծք բերել մի ազգի, մի ժողովրդի վրայ. մի զօրավար կարող է մի ամբողջ երկիր անապատ դարձնել, բայց հաղիւ մի դար անց կենալուց յետոյ՝ նրա արած աւերմունքի հետքն էլ չի երևում: Իսկ ինչ որ մի անգամ իբրև լաւ ու իրաւացի բան ասուած է, մի ցանած սերմի նման՝ չի փչանում, այլ աճում, հասնում ու պտուղ բերում: Դարեր թող անց կացած լինին ասուած խօսքերի վրայ, միշտ նորից ծլում է, դուրս գալիս ու աճում:

Լեզուն ինքն իւր համար ստեղծել է իր ճանապարհներն ու միջոցներն, որ հոգւոյ և մտքի իրան յայտնած գանձերը պահպանի այնպէս, որ երկար մնան: Գրելու արուեստը լեզուի աւելի զարգանալն է միայն ցոյց տալի, լեզուի լսելի ձայները կամ հնչիւնները տեսանելի նշաններով մարմնացնելն է: Արդէն հին աշխարհի ազգերի՝ եգիպտացւոց և Ասորեստանցւոց (որպէս և մեր Հայոց ազգի) խելքը հասել էր, իմացել էին իրանց անելու բանն, որ իրանց մտքերն, իրանց մեծ թագաւորների գովեստը քանդակագրեն քարերի վրայ: Ճարտարամիտ Փիւնիկեցոց ազգը տառերով գրելու արուեստը գտաւ: Յոյներն, ու Հռովմայեցիք իրանց բանաստեղծական ու պատմական գրուածներն իրանցից յետոյ եկող ազգերի համար թողին մագաղաթների վրայ: Միջին դարերի մէջ աշխարհումս ապրող կրօնաւորներն՝ միայնակեցական խցերի մէջ իրանց անց կացրած օրերում պարապեցան գրքեր արտագրելով, մինչև որ վերջապէս տասնևհինգերորդ դարում՝ տպագրութեան գիւտը բոլոր աշխարհի

Հոգեւոր ու մտաւոր կեանքի լուսոյ նոր դուռ բացեց: Այս աքուստը մեր օրերում թէ՛ սրչափ է տարածուել, Հաշուի տակ քցել՝ կամ լեզուով պատմել չէ կարելի: Այդ ասածին վկայ են բոլոր լուսաւորուած և մինչև ցայժմ դեռ ևս չլուսաւորուած ազգաց լեզուներն: Այժմ անց կացած դարերի ձայներն նոյնպէս մօտիկից և նոյնպէս յայտնի և հասկանալի կերպով ինչ մեզ հասնում, ինչպէս որ մեր օրերումն ապրող մարդոց ձայներն աշխարհին ամենահեռաւոր տեղերից: Ու պէտք է՛ր արդեօք մի նորագոյն գիւտի մտօին էլ յիշէի, մի շատ նոր գիւտի, որ կայծակի կայծը գործ է ածում լեզուի համար իրրւե միջոց, և այդ կայծը մի բազկերուկի զարկի չափ կարճ միջոցում իրրւե պատգամաւոր է դրկում հեռաւոր երկրների ու ծովերի վրայով մինչև ամենահեռաւոր ծովերի ափերը: Մարդկային լեզուն ոչ մի ժամանակ, այլ միայն մեր օրերում դարձած է աշխարհին մարդոց իրար հետ եղբայրացնելու առաջնալ:

Աշխարհիս մարդոց իրար հետ եղբայրանալն, որով մարդոց որդիքն իրանց երկնաւոր Հօր մի ընտանիքն են ճանաչում իրանց, քրիստոնէութեան մեծ միտքն է ու մեծ գործը: Մեր Փրկիչն իւր օրերումն, երբոր ազգերը սաստիկ թշնամական ոգով վարուելով իրար հետ, ամենայն եղբայրական կամ բարեկամական յարաբերութեան առաջ խոր անդունդք էին բացել և մարդկային ամենայն կապը կտրել, այդպիսի ժամանակ քարոզեց Աստուծոյ արքայութեան աւետարանն և իւր աշակերտներին պատուիրեց ասելով. «Գնացէ՛ք ամենայն աշխարհ, սօրվեցրէ՛ք ամենայն հեթանոսներին ու մկրտեցէ՛ք նորանց»: Գնացին և արին, ինչպէս որ իրանց ասել էր. նրոնցից յետոյ էլ ուրիշները գնացին, և անընդհատ ազգերի ամեն շրջաններում ու ժողովարաններում, ամեն կերպ աշխատելով անձնուիրաբար, Աստուծոյ արքայութիւնն աւելի և աւելի տարածվում է և յառաջ տարուում: Այժմ պէտք է ասենք, որ բացառապէս միայն կրօնական քարոզութեան խօսքը չէ, որ Աստուծոյ արքայութեանը տարածուելուն և առաջ հրթրաւուն համար իւր մեծ նշանակութիւնն ունի, այլ և ամեն մի ուսումն, ամեն մի

օգտակար աշխատութիւն՝ գիտութիւնն ընդարձակելու, ամեն մի նոր գիւտ, որ մարդուս միտքը լուսաւորում է, և մարդոց միմեանց հետ աւելի սերտ կապով կապում: Պատմութեան վկայութեամբ անհերքելի կերպով հաստատուած է, որ միայն քրիստոնէութիւնն է այժմեան լուսաւորութեան, վարուց ուղղութեան ու կրթութեան մայրն. և ինչպէս որ Եւրոպայի ամեն ազնիւ ուսումն և յառաջագիմութիւն իւր յաջող ընթացքն է ունեցել քրիստոնէութեան՝ տիեզերք շարժող զօրութիւնովն, այնպէս էլ մտաւոր և բարոյական զարգացումը գործակից պիտի լինի քրիստոնէական ճշմարտութիւնները միշտ աւելի խոր մտցնել ազգերի կեանքի մէջ: Մի գուցէ կասկածող լինի, որ մեր օրերի լուսաւորութիւնը Յիսուսի աւանդած ուսումը, կարելի է, վերջապէս ոչընչացնի, կամ բանի տեղ դնել չտայ: Զէ կարող այդ անել, ինչու որ Աստուծոյ գործն՝ թոյլ չի տալ, որ յետ քցուի, կամ արգելուի. եթէ ուզենայ էլ, էէ կարող, այլ ընդհակառակն ակամայ պիտի օգնի միայն Աստուծոյ գործն առաջ տանելու: Դորա մի անհերքելի ապացոյցն այն է, որ Փրկչի բոլոր աշխարհիս մարդոց իրար հետ եղբայրացնելու սուրբ գաղափարին հէնց մեր օրերումն ուսումնով ու հնարագէտ արհեստներով աւելի ճանապարհ են բաց անում:

Սուրբ գիրքն ասում է թէ՝ մարդոց մեղսային կրքերով յառաջ եկաւ լեզուների խառնակութիւնն, որ ազգերին իրարից բաժանեց, Բայց դորա մի հակապատկերն է ցոյց տալի քրիստոնէութեան մի պատմութիւնը հոգեգալստեան առաջին օրուայ, ուր որ գրուած է թէ՝ Քրիստոսի աշակերտներն սկսեցին այլ և այլ օտար լեզուներով աւետարանը քարոզել: Ինչ որ ատելութեան լեզուն մի ժամանակ բաժանել էր, այժմ՝ սուրբ հոգւոյ լեզուն դարձեալ պիտի միացնէր: Երկրագնդիս ամեն տեսակ բարբառներով քարոզվում է մի բան միայն, որ հարկաւոր է, այսինքն է՝ մի հաւատ, մի սէր, մի յոյս, Ինչպէս որ հոգեգալստեան այն օրն այլ և այլ ազգերից հաւաքուած բազմութիւնը զարմանալով ասում էր թէ՝ լսում ենք մեր լեզուներով Աստուծոյ մեծամեծ գործերը խօսելն, — այսպէս էլ մեր օրերում կան միլիոնաւոր մարդիկ, որ իրանց լեզուով լսում են

փրկութեան խօսքը: Խոնարհում են ու երկրպագութիւն անում մի Աստուծոյ և երկնաւոր Հօր առաջ, ու միասիրտ աղօթք անում, թէ և տեսակ տեսակ լեզուներով և ասում թէ՛ գայ Բո արքայութիւնդ:

Ես էլ իմ շրթունքիս շունչն աւելի ազնիւ կերպով գործածել կարողացած կլինիմ, երբ որ իմ երկնաւոր Հօր Աստուծուն աղօթք անեմ: Աղօթքը մարդկային լեզուի բացուած ամենաոճրբ ծաղիկն է: Իմ երկնաւոր Հայր, Բո արքայութիւնդ ինձ էլ գայ, ինչպէս որ երկրիս վերայ եղած իմ բոլոր եղբայրակիցներիս: Եւ երբ որ ես մի օր այս անցաւոր աշխարհիցս կը բաժանուեմ, թող տունը ինձ, որ իմ մահուան անկողինքիս մէջ էլ՝ իմ վերջին շնչովս էլ ասեմ՝ սո՛ւրբ լինի Բո անունդ:

(Թարգմ. գերմ.) Գ. Ն. Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՑ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՅ,

(Շարունակութիւն)

Հրաման առած էր Սաֆար-Ալին Խաչատուր վարդապետի անձի համար մաղ մի անգամ չթողնել իրեն, և լսելով միաբանաց ոմանց նորա ընչից առնել, փախնելը, շուտով ի Զուլանայերկու մարդ յղեց նոցա ետեւէն, որը գնալով ի նոցանէ յետ առին, քերին նորա ամենայն ինչքն յանձնեցին նմա. ապա թէ ոչ, Խաչատուր վարդապետ, ոչ ևս վանուց մի շնչաւոր էակը, կարող էր ազատուիլ, բոլորն ալ պիտի սպանուէին:

Արէլ վարդապետ իրեններով գնաց ազատուաւ. Գալուստ